

2021 թվականից համալսարանում ներդրվել է ներքին դրամաշնորհների տրամադրման ծրագիրը՝ ՃԾՀԱՀ գիտական խորհրդի կողմից հաստատված կարգին համապատասխան: Դրամաշնորհները տրամադրվում են գիտահետազոտական աշխատանքների խրախուսման, ինչպես նաև դրանց իրականացմանն ուսանողների մասնակցությունն ապահովելու նպատակով: Մրցույթին կարող են մասնակցել համալսարանի հիմնական աշխատող և գիտական կոչում ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները և գիտաշխատողները՝ ուսանողների ներգրավումով: 2021 թ. մրցույթում հաղթող են ճանաչվել հետևյալ թեմաները (յուրաքանչյուրը 2 միլիոն ՀՀ դրամ)՝

***1.«Կամուրջների թռիչքային կառուցվածքների գործիքային մշտադիտարկման համալիրի մշակում և փորձարկում» ծրագիր***

**Թեմայի ղեկավար՝** տ.գ.թ. Արտաշես Սարգսյան

**Մասնակից ուսանողներ՝** Տարոն Բաղդասարյան, Էլեոնոր Հարությունյան

**Ծրագրի նպատակը.** Վերջին տարիներին քաղաքային ուղեցանցերի և կամուրջների վրա երթևեկության ինտենսիվության աճի և խցանումների պատճառով թռիչքային կառուցվածքների հեծանների վրա մեծացել է շարժական բեռնվածքի ազդեցությունը: Ծրագրի արդյունքում մշակվելու է չափիչ գրանցող սարքավորումների համալիր և դրա ղեկավարման մեթոդաբանություն, ինչը թույլ կտա իրականացնել կամուրջների տեխնիկական վիճակի մոնիտորինգ՝ առանց թանկարժեք փորձարկումների և երթևեկության դադարեցման:

***2.«Շինարարական մեքենաների, մեխանիզմների, գործիքների, սարքավորումների նախահաշվանորմատիվային տեղեկատվական շտեմարանի արդիականացում» ծրագիր***

**Թեմայի ղեկավար՝** տ.գ.թ. Արմինե Ղուլյան

**Մասնակից ուսանողներ՝** Արմեն Ավետյան, Սաթենիկ Հայրապետյան

**Ծրագրի նպատակը.** Հետազոտության արդյունքում կստեղծվի շինարարական մեքենաների, մեխանիզմների, գործիքների և սարքավորումների վերաբերյալ տվյալների կիսաավտոմատ շտեմարան, ինչը կնպաստի շինարարության կազմակերպատեխնոլոգիական նախագծերի մշակման և նախահաշվային փաստաթղթեր կազմման համար հավաստի և արդիական տվյալների ապահովմանը:

***3.«Շենքերի և շինությունների էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացմանն ուղղված փորձարարական հետազոտությունների մեթոդաբանության մշակում» ծրագիր***

**Թեմայի ղեկավար՝** տ.գ.թ.Սիրանուշ Էզնատոսյան

**Մասնակից ուսանողներ՝** Կարեն Մովսիսյան, Սպարտակ Սարգսյան, Դավիթ Հակոբյան:

**Ծրագրի նպատակը.** Հետազոտական աշխատանքների արդյունքում կառաջարկվեն շենքերի էներգաձախսի նվազեցման տեխնիկապես նոր, ոչ ծախսատար լուծումներ, կմշակվի գործիքային չափագրում կատարելու և տվյալների հավաքագրման նոր մեթոդաբանություն:

#### **4.«Լազերային դեֆորմանտորի նախագծում և պատրաստում» ծրագիր**

**Թեմայի ղեկավար՝** տ.գ.դ. Հովսեփ Պետրոսյան

**Մասնակից ուսանողներ՝** Վահան Գևորգյան, Տաթևիկ Իսաչիկյան

**Ծրագրի նպատակը՝** Ներկայումս երկրաչափական և հիդրոդինամիկական նիվելիրացման եղանակների կիրառման պարագայում հսկիչ կետերի նստվածքները և տեղաշարժերը որոշվում են սկզբնակետի կամ ելակետի նկատմամբ վերազանցումների ուղղակի չափումների միջոցով: Ծրագրի արդյունքում առաջարկվելու է չափագրման նոր համակարգ, որով հսկիչ կետերի նստվածքները կարող են որոշվել ոչ թե վերազանցումների ուղղակի չափման միջոցով, այլ անմիջական վերազանցումը որոշել հսկիչ կետում տեղադրված լազերային ընդունիչում գրանցված յուրաքանչյուր կետում ֆիքսված լազերային տվիչից ճառագայթի տեղաշարժով, իսկ հսկիչ կետերի միջև վերազանցումները հաշվարկել ստացված տվյալներով: